Հայտարարություն

- ՀՀ Շիրակի մարզի «Բենիամինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ Հայոց եկեղեցու պատմություն (շաբաթական 2 ժամ), Հասարակագիտություն (շաբաթական 7 ժամ), դասվար (շաբաթական 13), երաժշտություն (շաբաթական 8) թափուր տեղերի համար
- աշխատանքային շաբաթը՝ 5 օրյա,
- աշխատավարձը՝ ըստ դպրոցի դրույքային վարձաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով. թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթը տեղի կունենան 2024թ-ի նոյեմբերի 25-ին ժամը 14:00-ին «Բենիամինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Բենիամին փողոց 1, շենք 12

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1) ,մեկ լուսանկար 3×4 չափի
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) որակավորման վերաբերյալ
- Ինքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի ներկայացուցիչները նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերը (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում է հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2024թ. նոյեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից 14:00, բացի շաբաթ և կիրակի օրերից և տոնական օրերից «Բենիամինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ում:

Հասցեն՝ Շիրակի մարզ, գ. Բենիամին փողոց 1 շենք 12

Հեռախոս՝ 093266421